



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

517
-91

Ժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

ՎԻՐԱՔՈՒԺԱԿԱՆ ՀԻԿԱՆ ԳՈՒԹԻՒՆ ԵՎ ՕՊԵՐԱՑԻԱ



Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

«ԳՈՒՂԿԻՆԵՐՆ ԵՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
ԼԵՂՏՈՒԿՕՎ ՓՈՂՈՑ, Տ. 4.


1902

30 JUL 2010

1089

UNIVERSITY OF TORONTO LIBRARY

0 9 6 7 4 8 1 1



11.03.2013

7628

617

610
53-ԲՈ

ԲՃ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

Բ-94 պր.

ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՕՊԵՐԱՑԻԱ

1003
10072



Ա. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
ԼԵՂՏՈՒԿՈՎ ՓՈՂՈՑ, Տ. 4.

1902

Дозволено цензурою. С.-Петербургъ, 1 Декабря 1901 года.



РѢ. ЧИРОВАВЪ СРОБАНЧ,

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.



Յ Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Հատ են աշխարհիս վերայ հիւանդութիւններ և իւրաքանչիւրը ունի իւր համար առանձին բժշկութիւն:

Մէկը առողջանում է ներքին միջոցների օգնութեամբ, միւսը մեղմանում և թեթևանում է արտաքին միջոցների գործադրութեամբ:

Սակայն կան այնպիսի հիւանդութիւններ, որ որքան էլ ընդունէք դեղեր և քսէք զանազան իւղեր, օգնած չէք լինի:

Այդպիսի հիւանդութիւնները բաժանւում են միայն «խիրուրդիական» (վիրաբուժական, անդամահատական) միջոցներով կամ «օպերացիայով»:

Վերջենք օրինակի համար այսպիսի մի դէպք: Պառաւ տանտիկինը, մի փառաւոր օրի նախընթաց օրը, սկսեց պատերը լուանալ, իսկ պատի մէջ ասեղներ էին ցցած. պառաւը մոռացել էր այդ մասին. շփեց ձեռքը պատին—տրըխկ՝ ասեղը կիսուեց, մի մասը գէնը թռաւ, միւսը խեղճ կնոջ բուռը խրուեց, և այնպէս խորը՝ որ տեսնել անգամ չէր կարելի:

Վիտենք միայն, որ կտորը մէջն էր մնացած. մատները խաղացնել չի թողնում, ամեն մի շարժման ժամանակ այնպէս խիստ է ծակում, թէկուզ գոռայ:

Ինչ անել և ինչով օգնել:

Խեղճ պառաւը եթէ մտածէր դեղեր ընդունել կամ դրսից վէրքի վերայ դեղեր գնել, որպէսզի ձեռքը առողջացնի, անկասկած ամենքը կձաղձէին նրան, որովհետև ամենքիս


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՐԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Համար պարզ է, որ այդ դէպքում դեղերով ոչինչ չես անի.
ասեղը հանելու համար պէտք է կտրտել վէրքը, ուրիշ
խօսքերով «օպերացիայի» դիմել:

Այս օրինակով ամենքին հասկանալի է, որ այդպի-
սի դէպքերը միայն օպերացիայով կարելի է բուժել:

Բայց կան և օպերացիա պահանջող ուրիշ շատ հի-
ւանդութիւններ, որ միամիտ մարդը չի կարող վճռել՝
արդեօք դեղերով, թէ օպերացիայով կարելի է բժշկել:

Ահա այսպիսի հիւանդութեանց և նոցա հետ վար-
ուելու եղանակների մասին ենք խօսելու այս գրքոյով:



Ի՞նչ է ՕՊԵՐԱՑԻԱՆ

Երբոր բժիշկը ուղղակի ձեռքերով կամ սուր
ու բուժ գործիքների միջոցով օգնութիւն է հաս-
ցնում հիւանդին, ասում են թէ նա «օպերացիա է
անում»:

Օպերացիաները լինում են զանազան տեսակ:

Բբիշկը հիւանդի տեղահան եղած կամ դուրս
ընկած անդամը տեղն է ձգում, դա օպերացիա է,
կտրտում է խոցը—նոյնպէս օպերացիա է:

Լինում են հեշտ և դժուար օպերացիաներ.
մէկը տեսում է մի բոպէ, երկու, միւսը պահանջում
է ժամեր:

Ի նկատի ունենանք ընդ միշտ, որ չնացած,
չարմատացած և բարձի թողի չարուած հիւանդու-
թիւնները կարելի է օպերացիայի ենթարկել արագ
ու հեշտ, որից յետոյ հիւանդը ուղղում է կարճ
միջոցում:

Իսկ անուշադիր թողնուած հիւանդութիւն-
ները օպերացիայի ենթարկել դժուար է, վտան-
գաւոր և տևողական. հետևապէս արագ առողջա-
նալու վերայ յուսալ անկարելի է:

ԽԻՐՈՒՐԳԻԱՆ ԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Այն բոլոր հիւանդութիւնները, որոնք բժշկուում են միայն օպերացիայով, կոչուում են խիրուրգիական հիւանդութիւններ: Վերջիններս բազմութիւ ու բազմատեսակ են, որոնք են՝ տեղահան եղած, խախտուած անդամներ, ջարդուածներ, վերքեր, խոցեր, ուռոցներ (կոշկոռներ) վնասաբեր կամ անվնասակար, աղէթափութիւն, (փոշտանդութիւն, պորտաթափութիւն), ոսկրափտութիւն, միզաքարեր, անկանոն ծննդաբերութիւններ, զանազան այլանդակութիւններ, աչքացաւեր. սահանք, սև ջուր, աչքերի դեղնութիւն, թերթիչների փաթաթում և ուրիշ շատ շատերը. բոլորը թուել անգամ անհնարին է:

Բժիշկները գիտեն, թէ որ հիւանդութիւններն են պահանջում խիրուրգիական օգնութիւն:

Նոքա երկար ժամանակ սովորել են այդ՝ գորքերով և փորձուած բժիշկներից. և իրանք միշտ գործ ունին ամեն տեսակ հիւանդութիւնների հետ:

Զննում է և քննում բժիշկը մի հիւանդի և պարզ հասկանում, որ գործը առանց օպերացիայի չի կարող անցնել, այն ինչ ուամիկ ժողովուրդը այդ չի հասկանում. հասարակ ժողովուրդը կարծում է, թէ այդ հիւանդութեանցը ևս կօգնի դեղերով և իւղերով:

Տեսնե՛ք այդ է, որ յաճախ հասցնում է ողբալի հետեանքների. յուսալով գտնել օգնութիւն սովորական բժշկութեամբ, հիւանդը իսկոյն և եթ չի

լսում բժշկի խորհրդին՝ օպերացիա անել: Նա նախ և առաջ փորձում է բոլոր իրական մատչելի միջոցները. ամենից առաջ նա կգնայ ծանօթ կախարդի մօտ խորհուրդ հարցնելու, յետոյ կալուածատէր կնոջ մօտ, որը բժշկութիւններ է անում, «դալլաքների» և «սընըղչիների» մօտ, որոնք նոյնպէս բժշկում են:

Պէտք է ասել, պատահում են դէպքեր, որ մեր «գիւղական խիրուրգները» (դալլաքներ և սընըղչիներ) հարիւր հիւանդից մէկին առողջացնում են, բայց մի՞թէ այդ բացառութիւններն են որ կուրացնում են հայ գիւղացուն և չեն թողնում պարզ տեսնել ու հասկանալ բժշկութեան ոյժը և նշանակութիւնը, նորա միջոցների բարերար ազդեցութիւնները: Հայ գիւղացի, բաւական է քեզ լինել ազիտութեան անմեղ զոհ, ժամ է բաժանուելու խաւարից. ժամ է հասկանալու, որ բժիշկը մարդասպան չէ, որ նա իւրաքանչիւր հիւանդի բարին է ցանկանում:

Եւ այսպէս հիւանդը բոլորին այցելում է, ընդունում է դեղեր, դրսից քսում է իւղերով: Իսկ քանի որ նա այդ բոլորը կատարում է, անգութ հիւանդութիւնը զարգանում է իւր կարգին, աւելի ու աւելի դէպի վատը:

Տեսնում է հիւանդը, որ բանը վատ է, վերադառնում է բժշկի մօտ, բայց արդէն հնացած հիւանդութեամբ, որը այժմ բժշկել բաւական դժուար է:

Իերենք հիւանդների կողմից այդպիսի ազիտութեանց օրինակներ.

Ներկայանում է բժշկին զիւղացին բորբոքուած ձեռքով և խնդրում է օգնութիւն. ձեռքը ուռել է, կարմրութիւնը տուել է մինչև ուսը, դեղձերը թւի տակ փրքուել են, սապում է մարմինը:

— Ձեռքդ պէտք է կտրել, ասում է բժիշկը:

— Կարատե՛ր. երբէք չեմ թոյլ տայ, սարսափով աղաղակում է հիւանդը՝ ձեռքը թաղցնելով: Ուրիշ կերպ չե՞ կարելի օգնել. քսելու մի դեղ տուէք:

— Վերջապէս հասկացիր որ ձեռքիդ մէջը բուն է դրել վահրը (թարախ), նրան պէտք է դուրս թափել, այսպէս նա կարող է ուտել ձեռքդ շատ խորը: Դու կարող ես կամ ձեռքդ կորցնել, կամ մեռնել:

— Ոչ, կտրատել չեմ տա՛, յամառ կրկնում է հիւանդը. լաւ է տուէք ծծող մի սպեղանի (մահլամ):

Ինչքան որ բժիշկը աշխատում է համոզել, թէ սպեղանիով օգնել անհնարին է, հիւանդը անբաւական կերպով հեռանում է փաթաթելով ձեռքը:

Նա տանը շարունակում է տանջուել, փորձել բոլոր սպեղանիները, լափա (թանխաշ, ծեփելիք) և հասցնում է ձեռքը այն աստիճանի, որ նա հասնում է մահուան դուռը. կաշին սևանում է, թափւում, վահրը վերջապէս դուրս է գալիս, իսկ յետոյ սկսում է անվերջ իրարանցում առողջացման համար: Վերջերը չեն կցւում, ամբողջ ձեռքը ժահրոտում է, վերջերի անթիւ բերաններ են բացւում և երբեմն էլ թափւում են ոսկորները:

Երկար ժամանակից յետոյ թէև ձեռքը առողջանում է, բայց գործել առաջուայ պէս չի կարողանում: շատ երակներ են փչացել, շատ ժամանակ էլ կանցնի, մինչև որ ձեռքը ընդունակ կլինի գործի. մեծ զրկանք կ'կրէ մարդը իրան յամառութեան համար:

Իսկ յաճախ աւելի վատ է լինում. զարգանում է «խըլըրդէնի» (անտօնով ազօն), կամ սկսում է արեան վարակումն հոտած վահրով:

Սյդ դէպքում արդէն երկուսից մէկը, կամ պէտք է շտապել ձեռքը զատել, կամ անխուսափելի մահ ընդունել:

Իսկ եթէ հիւանդը թոյլ տար հէնց սկզբում յոշոտել վէրքը, գործը բոլորովին ուրիշ կերպարանք կստանար, վահրը իսկոյն և եթ դուրս կգար և ձեռքը կառողջանար շատ շուտ, մի քանի օրից հիւանդը կլինէր բոլորովին առողջ և կգնար առաջւայ նման աշխատանքի:

Վերցնենք ուրիշ մի դէպք:

Գալիս է բժիշկի մօտ մի կին: Նրա ստիւքի վերայ զարգանում է «քաղցկեղ» (րակ):

Սյդ հիւանդութիւնը շատ վնասակար է: Սկրսւում է նա մի տեղ մարմնի վերայ փոքրիկ բշտիկով: Յաճախ նրան «գորանուկի» տեղ են ընդունում և ուշադրութիւն չեն դարձնում:

Եթէ նրան ժամանակին չհեռացնեն մարմնից, նա կաճի, կխոցոտուի՝ տալով իւր շուրջը որոշ նշաններ. հիւանդը սկսում է նիհարել և մեռնում է:

Ահա այսպիսի հիւանդութեամբ դիմում է կինը բժշկին: Նա դեռ չգիտէ, թէ ինքը ինչով է հիւանդ. զգում է իւր կրծքին մի փոքրիկ ուռուցք, որը մի փոքր ցաւում է:

Բժիշկը ասում է.— Ըւերջ հիւանդութիւն է, դա «քաղցկեղ է» (րակ), պէտք է իսկոյն և եթ կարել:

Նրան կինը չի հաւատում. այդպիսի մի դատարկ բան և յանկարծ նրան առաջարկում են օպերացիա:

— «Կանցնի և այսպէս», ասում է կինը. «առեք ինձ միայն սպեղանի, նա բոլորը դուրս կծծէ»:

Ինչքան որ բժիշկը աշխատում է համոզել հիւանդը իւր ասածն է պնդում:

Անցնում են շաբաթներ, ամիսներ: Բշտիկը մեծանում է. նրա կաշին կարմրում է, վեր թափւում:

Կինը ուրախ է. «ահա այժմ թոյնը դուրս կգայ», մտածում է նա, «և ծիծա շուտով կառողջանայ»:

Իժբախտաբար կնոջ ուղաճը չեղաւ:

Վէրքը ընդարձակւում է, պինդ հանդոյցը աւելանում:

Սկսում են երեան գալ նոր բշտիկներ կրունատակում և պարանոցի վերայ, և նրանցից շատ շատերը, ինչպէս համրիչի հատիկներ թափւում են պարանոցի շուրջը:

Կինը նիհարում է:

Այժմ արդէն ինքը տեսնում է, որ սպեղանին չի օգնում:

Նա բոլոր դիւղական միջոցներով բժշկուեց, բոլոր «կախարգներին» այցելեց. ճար չկայ, պէտք է նորից գնալ բժշկի մօտ:

Քննում է բժիշկը հիւանդին.

Անհնարին է ուղղել ինչպէս կտրատել այժմ բոլոր խլրդային բազմաթիւ հանդոյցները, որոնք այդ ժամանակամիջոցում տարածուել էին կաշուտակ, գեղձերի մէջ, ամեն տեղ:

Բժիշկը հրաժարւում է օպերացիա անելուց. ասում է, որ ժամանակը անցել է, և կինը վշանում է երիտասարդ հասակում, երբ դեռ երկար կարող էր ապրել աշխարհիս վերայ՝ օգտուելով առողջութիւնից:

Լաւ էր նրան սկզբից լսել բժշկին, երբ դեռ միայն մէկն էր խլրդային հանդոյցներից նրա կրծքում. կհանէին այդ կոշկոռը և նա բոլորովին կառողջանար:

Շատ յաճախ խլրդենին (քաղցկեղ) զոյանում է կանանց արգանդի վրայ:

Սկզբում կինը չի կարող հասկանալ, թէ հիւանդանում է «րակով». երեան են դալիս «ապարահ» (բէլի), անժամանակ արնահոսումն, բայց նա ուշադրութիւն չի դարձնում:

Կզնայ բժշկի մօտ միայն այն ժամանակ, երբ արդէն արնահոսունքը քամում է նրա ոյժերը:

Եթէ բժիշկը, քննելով նրան, կասի, որ նա հիւանդ է «րակով», որ պէտք է օպերացիա անել, նա ոչ մի կերպ չի հաւատալ. յամառութեամբ կինդրի արիւն կանգնեցնելու համար կաթիլներ

կամ ուրիշ ներքին միջոցներ. հաւատացրէք դուք նրան հէնց այդ բողոքին, թէ այդ հիւանդութիւնը ուրիշ կերպ բժշկել չի կարելի, բացի օպերացիայից, նա ձեզ լսել չի ցանկանայ:

Բայց անա ապարանը և արնահոսանքը յաղթում են նորան, վատ հոտ է փչում նրանից, կէնը նիհարում է, նուազում, իսկ օպերացիայի էլ չի գալիս:

«Տակը» այդ միջոցում աւելի է աճում ու զարգանում. տարածւում է աղեքների և միզափամփուշտի չորս կողմը:

Ցաւը դառնում է անտանելի, ցաւում է գաւակի ոսկրը, ցաւում է ստամոքսի ներքեւը:

Ահա այս բողոքում հիւանդը պատրաստ է ամեն մի օպերացիայի, բայց ոչ ոք չի յանձն առնում այդ դործը. հիւանդութիւնը շատ է արդէն հնացած:

Ինչքան այդպիսի անբախտ կանանց դուք կպատահէք: Փչանում են նոքա բոլորովին իզուր:

Ոչ թէ հիւանդութիւնն է տանում նոցա դէպի մահը, այլ իրանց ազիտութիւնը, անհասկացողութիւնը, նոյնպէս և անվստահութիւնը դէպի բժիշկը:

Եթէ նոքա լսէին բժիշկների խորհրդին և հաւատային, որ նոցա հիւանդութեանցը չեն կարող օգնել ոչ ներքին, ոչ էլ արտաքին դեղերը, այլ կօգնէ միայն վաղորօք կատարուած օպերացիան, շատերը նոցանից կապրէին աշխարհիս վերայ, շատ բաներով թեթեւացած կլինէին նոցա դառն տանջանքները:

ԻՆՉՈ՞Ւ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆ
ՕՊԵՐԱՅԻԱՅԻՑ

Հազիւ հարիւր հիւանդից մէկը կհամաձայնի օպերացիայի ենթարկուելը երբ այդ կառաջարկի նրան բժիշկը, այլ իննուսուն ինը կհրաժարուի և կխուսափէ խիրուրդիական օգնութիւնից:

Եթէ հարցնես իւրաքանչիւրին այդ հիւանդներից, ինչ՞ու նա չի համաձայնում օպերացիայի, կպատասխանէ մօտաւորապէս այսպէս:

«Սարսափելի է, երբ մտածում ես, որ քեզ պէտք է կտրատեն դանակով. չէ՞ որ այդ անտանելի է: Սիրտս կպատուի, հոգիս դուրս կգայ. բացի այդ մտածում էլ ես, աւելի վատ չլինի օպերացիայից յետոյ:

Կասկած չկայ, որ ցաւը ծանր է ամենքի համար. սաստիկ ցաւից մարդ մինչև անգամ ուշաթափւում է. բայց եթէ անկարելի լինէր օգնել այն ժամանակ շատ օպերացիաներ կարիք չէր լինի կատարել:

ՕՊԵՐԱՅԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ՑԱԻԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ
ՄԻՋՈՅՆԵՐ

Բարեբախտաբար, բժիշկների ձեռքին հիմա շատ միջոցներ կան որ կարող են խլացնել ամեն մի ցաւ օպերացիաների ժամանակ:

Հիւանդը նոյն բողոքին ոչնչ չի զգում, թէկուզ նրան կտրատիր, թէկուզ ծակոտիր հիւանդ տեղը,

նա ոչինչ չի իմանալ. կարծես նա փայտից է կամ մարմինը օտարինն է:

Ասենք թէ պէտք է օպերացիա անել հիւանդի աչքը. կտրել նրա «սահանքը» (կատարակտա):

Այստեղ արդէն դիմում են ցաւը մեղմացնող միջոցների, այն է «կօկային», ածում են աչքի մէջ մի քանի կաթիլ. մի քանի բուսական յեւոյ աչքը դառնում է արդէն անզգայ, միայն այն ժամանակ են կտրում սահանքը, և հիւանդը ոչինչ չի զգում:

Ուրիշ միջոց, որ գործ են ածում օպերացիայի ժամանակ ցաւը անզգայ դարձնելու. այդ է «խլօրօֆորմը» կամ քնեցնող կաթիլներ. նրան կաթեցնում են բամբակի վերայ և տալիս են հիւանդին հոտոտելու:

հիւանդը ներշնչելով խլօրօֆորմը մի քանի անգամ, սկսում է թեթեւ կերպով նրա գլուխը պտտուել. յետոյ զցում է նրան քնի մէջ և նա խորը քնանում է: Եթէ այդ ժամին օպերացիա անեն, նա բոլորովին ցաւ չի զգալ:

Բոլոր այդպիսի միջոցները կոչւում են ցաւը մեղմացնող միջոցներ: Բժիշկները անուանում են սոցա «նարկոտիկան»:

Իոցա շնորհիւ կարելի է տանել ամեն մի օպերացիա:

ԿԱՐՈՂ Է ԱՐԴԵՕՔ ՕՊԵՐԱՑԻԱՆ ՎՆԱՍԵԼ ՀԻՒՍՆԴԻՆ

Ինչպէս մենք տեսանք, հիւանդի երկրորդ մեծ հոգան էր, երբ նրան օպերացիա է սպասում, արդեօք նա չի՞ փչանալ կամ չի լինիլ յետոյ աւելի վատ:

Երբ որ բժիշկը համոզում է, որ անհրաժեշտ է օպերացիա անել, հիւանդը միշտ կասկածով է վերաբերւում:

Նրա գլխում նստում է մի միտք՝ թէ բժիկները սիրում են կտրատել, և որ գլխաւորն է, կարիք չկայ:

Կարող է այսպէս էլ առողջանալ այն ինչ օպերացիան կվնասի:

Դատենք, ճիշտ է արդեօք:

Այն կարծիքը, թէ օպերացիան կարող է վնասել, խիստ տարածուած է ժողովրդի մէջ:

Իրա պատճառը պէտք է որոնել նրա մէջ, որ երբեմն օպերացիայից յետոյ մարդիկ մեռնում են, չեն ապրում: Իհարկէ ռամիկ մարդը չի կարող դատել ու հասկանալ, թէ ի՞նչից մեռաւ հիւանդը. մեռաւ օպերացիայից յետոյ, նշանակում է մեղաւորը օպերացիան է:

Վերցնենք թէկուզ այսպիսի օրինակ:

Բերում են բժշկի մօտ մի երեխայ, որի կոկորդը յանկարծ ցաւ է բռնել:

Գունատ երեխան կապտած շրթունքներով, խռպոտ կերպով հազում է, հեռւմ կարծես որկորը փակուել է ու շնչելը անկարելի դարձել:

Որպէսզի երեխային ազատի խեղդամահ լինելուց, բժիշկը օպերացիա է անում, որը կոչում է «տրախէօտոմիա»:

Նա կարատում է կոկորդը, մաքրում է նրան և դնում նրա մէջ մի խողովակ, որով երեխան ազատ շունչ է առնում և որից յետոյ բոլորովին առողջանում է:

Մեռնում է երեխան միայն այն դէպքում, երբ նրա ցաւը լինում է փնասաբեր, օրինակ երբ նա հիւանդ լինէր «գրիփտերիտով», որից մեռնում են հիւանդացած երեխաների համարեա կէսը: Թէև երեխան այդպիսի դէպքերում ազատ է շունչ քաշում, բայց այնուամենայնիւ նա մեռնում է այդ ծանր ու անզուժ ցաւից:

Եթէ մեռնի երեխան, որին օպերացիա է արած, թէ ծնողները և թէ ռամիկ ժողովուրդը անպայման կասեն, որ երեխան մեռաւ օպերացիայից, միամիտներն էլ կհաւատան նոցա:

Այդպէս և կպնդուի այն միտքը, «թէ երեխաները մեռնում են կոկորդի օպերացիայից յետոյ»:

Ի հարկ է ռամիկ համար դժուար է հասկանալ իսկական մահուան պատճառը. բժիշկները զիտեն միայն, որ կոկորդը կտրել փնասակար չէ և չի կարող մահ պատճառել, իսկ եթէ «գրիփտերիտով» հիւանդացողները մեռնում են օպերացիայից յետոյ, դրա պատճառը միայն նրանց վատ հիւանդութիւնն է և ուրիշ ոչինչ:

Զգուեցնում է գիւղացուն նոյնպէս և ձեռատ, անոտ, անմատ, առհասարակ ամեն մի անդամալոյծ,



որոնք, կարծես կրում են իրանց փրկութեան հետքեր:

Ամեն մէկը նայում է նոցա վերայ և մտածում. «Աւելի լաւ է մեռնել, քան ապրել անձեռն կամ անոտ. հիմա նա միայն ծանրութիւն է մարդկանց համար. իւր համար չի կարող վաստակել մի կտոր հաց, ուրիշների ուտին է ծանրացած. հէնց իրան համար կեանքը գեղեցիկ չէ, նրան օպերացիա չպէտք էր անել»:

Իհարկէ հեռուից հեշտ է այդպէս դատել, բայց դրէք ձեզ նոյն անդամալոյծի տեղ: Չէ՞ որ կեանքը ամենքիս համար թանգ է, իսկ օպերացիան արել են որպէսզի կեանքն ազատեն:

Մեզնից իւրաքանչիւրը հասցնելով ոտքը ստոյնելու աստիճանի՝ կլսի բժշկից հեռեւեալ խորհուրդը.

— «Ի՞նչ կամ օպերացիայի պէտք է ենթարկուես, որ ապրես, կամ թէ չէ մահը անխուսափելի է քեզ համար»:

Մեզանից ո՞րը մահ կընտրէ իւր համար. բոլորս էլ կասենք. «Թէկուզ անդամալոյծ մնամ, իսկ մեռնել երբէք չեմ ցանկանար»:

Մի՞թէ միայն նա է նրաժարւում օպերացիայից, ով չի հաւատում բժշկին և կարծում է «գուցէ այսպէս էլ կենդանի կմնամ»:

Բայց այդպիսի դէպքերում հազիւ թէ մէկը կենդանի մնայ. իսկ եթէ հարիւրից մէկն էլ չի մեռնում, միւսնոյն է, անոտ է մնալու, որովհետև մրսեցրած մասերը այլևս չեն կենդանանալու. նա:

1001
1001

քա մեռել են, իսկ մեռածը հեռու պէտք է գցել: Ոտը կթափուի և առանց օպերացիա, բայց զրա համար երկար ժամանակ կհարկաւորուի: Մարդը մըրսեցրած անգամներով ամբողջ տարիներ է պտուկում անկողնու մէջ—մեռած մասերը փթում են և նոցա դարչանոտութիւնը բռնում ամբողջ տունը:

Սյդպիսի հիւանդը բոլոր տանեցոց տանջում է, իսկ ինքը նուազում և նիհարում, ինչպէս մի չոփ. թէ ինչ տանջանքներ է կրում չենք նկարագրել:

Բժիշկները այդ բոլորը զիտեն և հասկանում են, զրա համար էլ առաջարկում են օպերացիա:

Սյդ օպերացիայով նրանք կեանք են փրկում և տանջանքներից ազատում,

ձիշտ է, պատահում է երբեմն անբախտութիւն, երբ հիւանդը օպերացիայի ժամանակ մեռնում է:

Սյդ արդէն այնպիսի տպաւորութիւն է գործում բոլորի վերայ, որ նման դէպքերը երկար սպրում են նոցա մտքի մէջ և սարսափեցնում հիւանդներին:

Հարիւր ու հազար յաջող դէպքերը նոքա մոռանում են, իսկ մտաբերում են միայն այդպիսի մի անյաջող դէպք:

Ի այց, փառք Աստուծոյ, որ դժբախտ դէպքեր պատահում են շատ սակաւ, և դոքա մեզ չպէտք է յեա պահեն օպերացիայից:

Ձէ՞ որ, օրինակ, երկաթուղիների վերայ պատահում են զնացքների խորտակումներ, որից և

մեռնում են հարիւրաւոր ծանապարհորդներ, այնուամենայնիւ դրանից վախենալով մենք չենք նստում տանը, այլ հէնց որ անհրաժեշտ է լինում՝ զնալ, ամենայն հանգստութեամբ ենք ծանապարհ զնում: մեր կեանքի մէջ շատ ենք ծանապարհ անցնում և բարեբախտաբար հասնում անվնաս, այսպէս էլ այստեղ:

Նրա համար, որ մէկի հետ պատահեց զրժբախտութիւն, չպէտք է միւս հիւանդները մնան առանց խիրուրդիական օգնութեան:

Ձէ՞ որ այդ դէպքում միենոյն է. նոքա պէտք է մեռնեն իրանց հիւանդութիւնից:

Սյնտեղ մահը կասկածելի է, իսկ այստեղ անխուսափելի:

Սյժամ տեսնենք, հիմնաւոր է նոցա թերահաւատութիւնը դէպի բժիշկները թէ ոչ, երբ նա առաջարկում է հիւանդին օպերացիա անել:

Ենթադրենք թէ բժշկի մօտ եկաւ մի որեւէ խիրուրդիական հիւանդ, հէնց ասենք թէ «աւագախտութիւնով» (կաճէննայեա բալէյն):

Սյդ հիւանդութեան ժամանակ միզափամփուռի մէջ կազմւում են քարեր:

Դլխաւորապէս այս հիւանդութիւնով տանջւում են երեխաները, երբեմն էլ հասակաւորները:

Սյս հիւանդութիւնը պատճառում է մարդկանց շատ չարչարանքներ, մանաւանդ երբ կատարելապէս դարդանում է, կարում է մէզի ծանապարհը, պատճառում սաստիկ ցաւ, երբեմն էլ յաճախ ձղձոտելուց աղիքը դուրս է գալիս,—սա ոչ մի դեղի չի ենթարկւում:

Բայց երբ օպերացիա են անում, հանում են քա-
րը, հիւանդը առողջանում է:

Ահա, այս հիւանդութեամբ մարդը դիմում է
բժշկին:

Ինչ խորհուրդ կարող է ապ բժիշկը հիւանդին,
եթէ ոչ օպերացիա:

Եւ իսկապէս եթէ լինէին «աւաղախտութիւ-
նից» բժշկութեան ներքին կամ արտաքին միջոց-
ներ, ինչո՞ւ պէտք է բժիշկը ամենից առաջ չդիմեր
նոցա, ո՞րն է աւելի հեշտ, վերցնել գրել այդպիսի
մի միջոց և ճանապարհ գցել հիւանդին, թէ բժիշկը
կլինէր հանդիսա և թէ հիւանդի համար լաւ:

Եթէ բժիշկը օպերացիա է առաջարկում,
միայն այն պատճառով, որ ոչ մի միջոց չկայ այդ
հիւանդութեան դէմ, այլ օգնել կարող է միայն
օպերացիան:

Իրա համար էլ նա այդ է առաջարկում:

Հաճոյք և օգուտ այդ բանից նրա համար չկայ:

Ընդհակառակը, նրա համար աւելի անհանգրս-
տութիւն է և չարչարանք:

Օպերացիա անել երբէք հեշտ չէ:

Երբեմն բժիշկը կարող է ընդունել մօտ քսան
հիւանդ և կամ աւելի, քան մի օպերացիա անել,
այնպէս որ այդ օպերացիաները բժիշկների համար
անհնգատութիւն են և չարչարանք, և եթէ այնու-
ամենայնիւ բժիշկը այդ անում է, դա միայն նրա
համար, որ հասկանում է, որ ուրիշ կերպ չի կարելի
օգնել, չանէր նա օպերացիա, հիւանդը պէտք է
մեռնէր:

ՕՊԵՐԱՑԻԱՆ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԴԷՊՔԵՐՈՒՄՆ Է
ՕԳՏԱԿԱՐ, ԵՐԲ ԱՆՈՒՄ ԵՆ ԻԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ:

Մենք արդէն տեսանք, որ անուշազիր թող-
նուած, հնացրած հիւանդութիւնները բժիշկները
չատ սակաւ են ենթարկում օպերացիայի:

Այդ դէպքերում օպերացիան դժուար է,
վտանգաւոր և տալիս է քիչ յուսալի հետեանքներ:
Այս առանձնապէս պէտք է հասկանան հիւանդ-
ները:

Բաւական չէ վճռել օպերացիայի դիմել, պէտք է
և ժամանակը գիտենայ, երբ անել նրան:

Չի կարելի հանգստացնել իրան նրանով, թէ
ահա կփորձեմ առաջուց այս, յետոյ միւսը, իսկ
եթէ չի օգնի, այն ժամանակ կդիմեմ օպերացիայի:

Իւրաքանչիւր օպերացիա որքան շուտ է կա-
տարուած, այնքան լաւ է հիւանդի համար:

Ուրիշ դէպքերում վտանգաւոր է ուշացնել
ոչ թէ շարաթ, այլ նոյն իսկ մի օրը թանգ է, մի
ժամը ևս:

Վերցնենք օրինակ ծննդկաններին.

Նոքա, ինչպէս մահուանից, վախենում են ման-
կաբարձուհիների օպերացիաներից:

Տանջում է կինը ծննդաբերութեամբ մի
երկու օր, ազատուել չի կարող:

Ատում են, պէտք է բժիշկ կանչել:

Ամենեին ոչ, նա կսկսի ձեռքերով երեխան
քաշել և որ աւելի վատթարն է ինչ որ գործիք է
ներս տանում:

Ոչ, լաւ է մեռնել, մինչ այդ շարունակու՞մ է կինը համբերել և տանջուել:

Գործը չի յառաջանում:

Գիւղական պառաւները, «տատմերնրը», բոլորը փորձեցին իրանց միջոցները:

Տեսնում են արդէն, որ ոչինչով չեն օգնի, ուղարկում են բժշկի ետեից:

Բայց մինչև որ նա կգայ, ծննդականը արդէն մեռնում է, մեռնում է նրա հետ և երեխան, և այդ ծաղիկ հասակում, երբ կարելի էր ապրել ու ապրել:

Մէկ ուրիշը կապրի մինչև բժշկի գալը, չի մեռնում: Բժիշկը առնում է երեխան, կինը մնում է կենդանի:

Բայց անհետեանք չի անցնում կնոջ համար, որ նա այդպէս ուշացրեց դիմել խելացի միջոցի:

Նա դեռ շատ կհիւանդանայ դրանից:

Կարող է ստանալ աւելի ծանր հիւանդութիւն՝ «չպահել մէզը»:

Այդ ժամանակ կինը միշտ թրջուած է, նրանից դարձահոտութիւն է գալիս:

Բոլորը կխուսափեն նրանից և նա կդառնայ մի նահատակ իր ամբողջ կեանքում:

Սնհասկացող մարդիկ դուցէ և այդ դէպքում ասեն, թէ բժիշկը կնոջ միզափամփուշտը ունելիքով պատռեց, փչացրեց նրան, առանց հասկանալու, որ այդ ունելիքով հարիւրաւոր բժիշկներ հանում են հազարաւոր երեխաներ և բոլորը յաջողութեամբ՝ եթէ միայն ծննդաբերութեան ժամանակը չէ անցկացրած:

Այդ պատահում է և առանց բժշկի, երբ կինը երկար տանջուելուց յետոյ ինքն արդէն ծնում է, հէնց այդ հիւանդութիւնն է ստանում:

Կինում է այդ այն պատճառով, որ երեխայի գլուխը ծննդաբերելու ժամանակ ճնշում է միզափամփուշտը, և եթէ ծննդաբերութիւնը երկար է աւելում, այն ժամանակ այդ մշտական ճնշումից փամփուշտի պատը պատուում է և նրա ձեխքով սկսում է շարունակ մէզը դուրս հոսել:

Նեաւապէս, արդէն ոչ ունելիքն է մեղաւոր և ոչ բժիշկը, մեղաւորը ինքը ծննդականն է, նրա շրջապատողները, որ ժամանակին բժիշկ չհրաւրեցին:

Այդպիսի դէպքում չպիտի կորցնել ոչ մի բուպէ և պէտք է անպայման դիմել բժշկին օպերացիայի համար:

Մի ուրիշ օրինակ:

«Աղէթափութիւնը» (զոիժա) գիւղացիների մէջ յաճախ է պատահում. այդ ժամանակ ստամոքսի պատը դուրս է գալիս, ինչպէս մի պարկ և այդ պարկի մէջ յաճախ ընկնում են աղիքային օղակները:

Սովորաբար հեշտ է նոցա ուղղել դէպի յետ, բայց երբեմն խիստ ձգուելուց կամ անզղուշ թոխքից աղիքային օղակները դուրս են ընկնում այնպիսի ոյժով, որ դէպի յետ նոցա ոչ մի կերպ չէք կարող ուղղել:

Այն ժամանակ ասում են. — «Աղէթափութիւնը ձմլուել է» (ուշչեմլենիէ զոիժի):

Եւ ահա դալիս է վտանգաւոր բուպէն:

Ստամոքսում սկսւում է անտանելիցաւ, սիրտը խառնելը և փսխումը նորոգւում են բուպէաբար:

Հիւանդը մի քանի ժամում այնպէս է դունատւում և նիհարում, որ նրան ճանաչել անգամ չի կարելի, կարծես թէ նա ամբողջ ամիսներ է հիւանդ եղել:

Իսկ աղէթափութեանը ձեռք տալ անհնար է, նա կարմրում է, ուռչում, տաքանում և այլուում:

Եթէ այսպիսի հիւանդը չի շտապի անյտալող բժշկի մօտ և չի համաձայնուի օպերացիայի, այն դէպքում նա անպայման կկորչի:

Ճիշտ է, լինում են շատ սակաւ դէպքեր, որ ճնշուած աղէթափութեամբ հիւանդը մնում է կենդանի, բայց նա յաւիտեան դառնում է սպուռ:

Սովորաբար աղէթափութիւնը ճմլուելուց յետոյ հիւանդը մեռնում է, չի ապրում:

Օպերացիան անկասկած կազատի հիւանդին, բայց պէտք է վճռել այդ, չկորցնելով ոչ մի բուպէ անգամ այն ժամից, երբ պատահում է («աղէթափութեան ճմլումը»):

ՕՊԵՐԱՅԻԱՅԻ ԲԱՐԵԲԵՐ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

Ժամանակ է արդէն ձեռք վերցնել անհիմն վախից օպերացիայի միջոցին:

Ժամ է հասկանալու, թէ ինչ ահագին նշանակութիւն ունին խիրուրգիական միջոցները այդ հիւանդութեանց դէմ կուուելիս:

Ոչ մի ներքին և ոչ էլ արտաքին միջոցներ չեն հասցնում մեզ կարճ միջոցում այն փայլուն ու օգտաւէտ հետևանքներին, ինչպէս յարմար ժամանակին կատարուած օպերացիան:

Մի՞թէ մեծ բարերարութիւն չէ կոյրի համար, երբ նա օպերացիայից յետոյ յանկարծ տեսնում է լոյս աշխարհը:

Բայց չէ՞ որ կան այնպիսի կոյրեր, որոնց ոչ մի կերպ չես համոզի օպերացիա անել:

Ես գիտէի մէկ գիւղացի, որը ծերութեան հասակում («սահանքից») սկսեց կուրանալ (կատարակտա):

Եկաւ ինձ մօտ խորհուրդ հարցնելու:

Ասացի պէտք է օպերացիա անել, սահանքը կարել:

«Ի՞նչ ես ասում, ի՞նչ, քո տունն Աստուած շինի. լաւ է այնպէս մեռնել»:

Բայց Աստուած ծերուկին մահ չուղարկեց:

Նա կուրացաւ աւելի վատ:

Ապրելը նրա համար դարձաւ տանջանք. դնալիս միշտ սայթքում, վայր է ընկնում:

Գալը բերանն է տանում, կաթկաթացնում է:

Պէտք է մէկ մարդ ունենայ, որ նրան ուղեկցի:

Իսկ տանեցիները փնթփնթում են, արանջում. «Ճանրութիւն ես դու մեզ համար», ասում են:

Այսպէս համբերեց Տերուկը երկու տարի:

Մենք միմեանց յաճախ պատահում էինք:

Ես միշտ նրան հարցնում էի.

«Է՛, ի՞նչ, Տերուկ, շուտով կգաս օպերացիայի»:

Իսկ նա. «Ո՛չ, կերևայ որ կմեռնիմ այսպէս. Աստուծու կամքն է այս»:

Սակայն նրա համբերութեանը ևս վերջ եղաւ:

Եկաւ Տերունին հիւանդանոց:

Զանձրացրեց նրան կուրութիւնը:

— «Խոստովանուեցի, ճաշակուեցի և հիմա պատրաստ եմ թէկուզ մահուան», ասում է Տերունին:

Իսկ օպերացիան այնպէս հեշտ է և անվտանգ:

Բայց մարդկանց համար օպերացիան այնքան սարսափելի է, որ նոքա պատրաստում են նրան ենթարկուելու, ինչպէս մահուան:

Կարում է բժիշկը Տերունու «սահանքը»:

Խեղճ մարդը լոյս աշխարհ տեսաւ:

Նա կորցրեց իրան ուրախութիւնից:

Հիմայ միայն նա հասկացաւ, թէ իզուր տեղը երկար ժամանակ յամառում էր. երկու տարի չարչարուեց, էլ ի՞նչ ցաւեր չքաշեց, այն ինչ շուտունց կարող էր լաւ տեսնել, իւր տանեցիներին

անտեսութեան մէջ օգնել, եկեղեցի գնալ առանց ուղեկցի:

Մրանից յետոյ նա իւր բոլոր կոյր ընկերներին ինձ մօտ օպերացիայի էր ուղարկում:

Օպերացիայով ոչ թէ միայն հիւանդութիւն կարելի է բժշկել, այլ և անձուճութիւնները, այլանդակութիւնները ուղղել, անշնորք մարդուն բուրովին մարդավարի դարձնել:

Կայ մի հիւանդութիւն, դա է «փիֆիլիսը»:

Եթէ հէնց սկզբից կանոնաւոր կերպով չբժշկուի բժշկի մօտ, նա շատ տանջանքներ կպատճառի մարդուն, նա ընդ միշտ պիտի հիւանդանայ, երբեմն վերքերը ոտքերը կընկնեն, երբեմն էլ քիթն է թափուում:

Իսկ անքիթ մարդուն որքան ծանր է ապրել աշխարհիս վերայ. բոլորը նրա վերայ նայում են կասկածով, բոլորը կարծես վախենում են նրանից:

Ահա օպերացիայով ևս կարելի է այդ թըշուառութեանն օգնել:

Հիմա բժիշկները սովորել են նոր քիթ ստեղծել, աճեցնել այդպիսի հիւանդների համար:

Մարդս այդպիսի կարուած քիթով ընդունում է մարդկային կերպարանք:

Շատ օրինակներ կարելի է բերել օպերացիայի բարերար ոյժը ցոյց տալու համար:

Բայց ես կարծում եմ, որ այս վերոյիշեալներով ևս բաւական է հաստատելու այն համոզմունքը, թէ բժիշկները, որ առաջարկում են

հիւանդին օպերացիա, միայն նրա բարիքը ցանկանալուց է և ուրիշ ոչինչ:

Բոլոր բժիշկները «խիրուրդիայով» չեն պարագում:

Այնպէս է պատահում, որ գալիս է բժշկի մօտ հիւանդը, որին անհրաժեշտ է օպերացիա, բժիշկը նրան ասում է.

— «Ես ինքս քեզ օգնել չեմ կարող, այլ խորհուրդ կտամ զնաք այս ինչ տեղը, մայրաքաղաք թէ նահանգական, կամ ուրիշ տեղ, որտեղ օպերացիա են անում:

Տէնց այտեղ սկսում է նոր առասպել. փոխանակ լսելու բարի խորհուրդը և անցապաղ ձանապարհուելու, որտեղ ցոյց է տալիս բժիշկը, հիւանդը սկսում է պատճառաբանութիւն և զանազան ենթադրութիւններ անել:

— Շատ հեռու գնալ չի կարող, թանգ կնատի նրա վրա. ծանր է ընկնել անձանօթ հիւանդանոց, տխուր կլինի նրան հեռու իւր հարազատներից և այլն և այլն:

Անմիտ են այդ բոլոր դատողութիւնները. եթէ բժիշկը հիւանդին ուղարկում է մի տեղ օպերացիայի ենթարկուելու, նա աննպատակ չի անում այդ:

Նա զիտէ որ հիւանդին թանգ կնատի ծախսը, և որ դժուար կլինի նրան և այլն. այդ բոլորը նա շատ լաւ գիտէ, բայց ինչ արած:

Ուղարկում է նա օպերացիայի միայն ծայրահեղ դէպքում:

Չի լսում հիւանդը, «վատ կլինի», ասում է:

Մեծ դժբախտութիւն չէ փոքր ինչ տխրել հեռու ճնողներից և բարեկամներից, և ծախսել որոշ գումար:

Այդ բոլոր պայմանների հետ պէտք է հաշուել, միայն թէ կենդանի մնալ և առողջութիւն գտնել:

Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ Ն

Ի նկատի ունեցէք ընդմիշտ և լաւ յիշեցէք այս զրքոյկից հետեւեալը.


1. Կան հիւանդութիւններ, որոնք ոչ մի դեղով չի կարելի բժշկել, բայց միայն օպերացիայով:

2. Եթէ բժիշկը առաջարկում է հիւանդին օպերացիա, պէտք է կատարել նրա խորհուրդը: Նա արդէն զիտէ, որ այլ կերպ վարուել չի կարելի և ցանկանում է հիւանդին բարիք:

3. Եթէ օպերացիա անելը անհրաժեշտ է, որքան կարելի է շուտով անել՝ քանի հիւանդութիւնը չէ հնացած:

4. Չպէտք է սարսափել օպերացիայի ժամանակ զգալի ցաւից: Բժիշկները ցաւը խլացնելու միջոցներ ունին:

5. Սխալ է մտածել, թէ օպերացիան կարող է վատ հետեւանքներ ունենալ կամ սպանել մարդուն: Եթէ այդպէս լինէր, ոչ մի բժիշկ չէր համաձայնուի օպերացիա անել. չէ որ ձութիւն է վնասել իւր հիւանդին:



[Faint, illegible handwriting, likely bleed-through from the reverse side of the page.]

||
||

«Ազգային գրադարան»



NL0271948

1. Լուսին օգնութիւն մինչև բժշկի դայք (սպառ.)	5 կ.
2. Վարակիչ հիւանդութիւններ (սպառ.)	5 »
3. Ինչ է սիֆիլիսը (սպառ.)	5 »
4. Լոողջապահական զրոյցներ (սպառ.)	5 »
5. Ինչ է ժուժկալութիւնը (սպառ.)	5 »
6. Ինչ է անառակութիւնը (սպառ.)	5 »
7. Վեներական աստեր. (սպառ.)	5 »
8. Լշակերտի առողջապահութիւն (Թարգմ. սպառ.)	2 »
9. Մեր նեարդերը (սպառ.)	10 »
10. Սիֆիլիս (բարեփոխուած. սպառ.)	10 »
11. Լոողջ հոգին առողջ մարմնի մէջ (սպառ.)	10 »
12. Գեղձախտ. (զօլօտուխտ.) (սպառ.)	10 »
13. Ո՛վ է յանցաւորը.	15 »
14. Կարիք և բարեգործութիւն	15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն.	15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ.	15 »
17. Մարմնամարդութիւն (25 պատկերներով).	20 »
18. Լոողջապահական նուէր նորասի կանանց.	20 »
19. Կինը և տղամարդը.	15 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »

Գ Ի Ն Ն Է 5 Կ Ո Պ.

Հետևեալ վեց զրբերը, որոնցից առաջին երկուսը մամուլի տակից արդէն դուրս են եկել, տպուելուց յետոյ կվաճառուին Լիւալցիսայում հիմնուելէր հիւանդանոցի օդանոցի:

1. Կինը և տղամարդը.	15 կ.
2. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
3. Ինչ է կաշու հիւանդութիւնը	15 »
4. Լքրկարակեցութիւն.	15 »
5. Լոողջ և հիւանդ երեխայի ոգին	15 »
6. Սիֆիլիս և նեարդային հիւանդութիւններ	15 »